

ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԴԻԿԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱՒ ՊԵՅՐՈՒԹԻ ՍԵՋ



Սենտակի պաշտոնատարը այցելեց վարչապետ Հարիրիի:

Սենտակի Արաքիոյ արտաքին գործոց նախարար Սենտ Ֆայսալ իշխանը երէկ յետմիջօրեին ժամանեց Պէյրութ, իրանացի պետական պաշտօնատարներուն ներկայացնելու Միջին Արեւելքի խաղաղութեան համար Սենտակի Արաքիոյ գահաժառանգ իշխան Ապտալայի նախաձեռնութեան մասին ցարդ կատարուած խորհրդակցութիւններուն արդիւնքները, ինչպէս նաեւ խորհրդակցութիւններ ունենալու շրջանալիկ վարչապետներուն ու Պէյրութի մէջ գումարուելիք արաքական վեհաժողովին վերաբերեալ հարցերուն շուրջ:

Սենտակի պաշտօնատարը Պէյրութէն պիտի ուղղուի Դամասկոս: «Լիբանան ժամանեցի Գահիրէն, ուր տեսակցեցայ նախագահ Հիւսնի Մուպարաքի հետ եւ անոր փոխանցեցի Սենտակի Արաքիոյ Ֆաիտ թագաւորին եւ գահաժառանգ իշխան Ապտալային պատգամներ», ըսաւ ան եւ նշեց, որ տեսակցած է նաեւ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Մահերի եւ Արաքական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի հետ:

Պէյրութ ժամանելէ անմիջապէս ետք Սենտակի Արաքիոյ արտաքին գործոց նախարարը ժողով մը գումարեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ:

Այս հանդիպումէն ետք Ֆայսալ իշխանը յայտարարեց, որ իշխան Ապտալայի նախաձեռնութիւնը հիմնուած է միջազգային օրինակաւորութեան որոշումներուն եւ արաքական արդար իրաւունքներու պահանջատիրութեան վրայ:

Ան նաեւ ըսաւ, որ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի պիտի փոխանցէ Սենտակի Արաքիոյ Ֆաիտ թագաւորին բարեկամական պատգամ մը, որ կը վերահաստատէ Ռիատի նախանձախնդրութիւնը Պէյրութի վեհաժողովի յաջողութեան, որովհետեւ Լիբանան բարձր գին վճարած է պաղեստինեան դատին համար: «Այս յաջողութիւնը պայմանաւորուած է արաքական ղեկավարութեան միակամութեամբ», ըսաւ ան:

Ֆայսալ երեկոյեան տեսակցեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ: Ան այսօր պիտի այցելէ նախագահ Լահուտի:

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ այցելեց Պէյրութի մէջ գումարուելիք արաքական վեհաժողովին հետ առնչութիւն ունեցող վարչեր, ստուգելու նախապատրաստական աշխատանքներու ընթացքը: Այս ծիրէն ներս ան այցելեց վեհաժողովի կազմակերպիչ յանձնախումբի Սթարքոյի կեդրոնատեղին, ժողովին մասնակցելու արտօնութեան քարտերու կատարատիրութեան կեդրոնը, ժողովին հետեւող լրագրողներուն համար սարքաւորուած լրատուական կեդրոնը, նախապատրաստական աշխատանքները համակարգող յանձնախումբի կեդրոնը, Մոնրօ եւ Ֆէնիսիա պանդոկները եւ Պէյրութի միջազգային օդակայանի «Պատուոյ նախագահական հիւրարարը»:

Նախագահ Լահուտի կ'ընկերակցէին կազմակերպիչ յանձնախումբի նախագահը՝ նախարար Դաս-



Լահուտ կը պարգևատրէ Ուալիտ Պըն Թալալը:

ասան Սալամէ, նախագահական պահակագունդի հրամանատար գնդ. Մուսթաֆա Համուտան, նախագահական պալատի «փրոթօքոլ»-ի պատասխանատու Մարուն Հալմարի եւ նախագահի լրատուական հարցերու խորհրդական Ռաֆիք Շըլալա:

Նախագահ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց Ուալիտ Պըն Թալալ Պըն Ապտէլ Ապիկ իշխանը, զոր պարգևատրեց շքանշանով մը առ ի գնահատանք Լիբ-

անի անոր տրամադրած օժանդակութիւններուն: Ան նաեւ ընդունեց Յոյն Ուղղափառներու Իգնատիոս Գ. Հակոբ պատրիարքը, փոխ վարչապետ Իսամ Ֆարիսը, բանակի հրամանատար Կոր. Միշէլ Սիւլէյմանը, ֆրանսախօս երկրներու կազմակերպութեան մէջ իր ներկայացուցիչը՝ Շարլ Ռըզըրը, Մարոքի դեսպան Ապտէլ Ժալիլ Ֆանժիրոն եւ արաք փաստաբաններու խորհրդատու Պիլի մասնակցողներու պատուիրակութիւնը:

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արտաքին գործոց խորհրդարանական յանձնախումբը երէկ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ գումարուած իր ժողովին ընթացքին քննարկեց արաքական վեհաժողովին վերաբերեալ հարցերը:

Յանձնախումբի նախագահ Ալի Սալիլի գլխավորած ժողովը ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ հերթական այս վեհաժողովին արտակարգ բնոյթ տալու, եթէ անիկա պիտի տայ այս հանգրուանի մարտահրաւերներուն համապատաս-

խանող որոշումներ հետեւեալ հարցերուն առնչութեամբ:

● Ենթադրել, որ վեհաժողովին ներկայացուցիչը որեւէ նախաձեռնութիւն պէտք է առաջադրէ հաստատուած ընդհանուր եւ արդար խաղաղութեան, որ կ'ապահովէ արաքական բոլոր իրաւունքները:

● Չօրսովիզ կանգնել ինթիֆատային եւ դիմադրութեան ընդդէմ խրախուսելու ուղիներուն:

● Մերձել իրաքի կամ արաքական եւ

խալամական երկիրներ հարուածելու դատերը, ինչպէս նաեւ Հըզպալլան եւ պաղեստինեան կազմակերպութիւններ ահաբեկչութեան ցանկերու վրայ յիշելը, յստակօրէն իրարմէ պանապանելով ահաբեկչութիւնն ու դիմադրութիւնը:

● Նեցուկ կանգնել Լիբանանի եւ Սուրիոյ եւ կատարել Լիբանանի ինստացուած օժանդակութիւնները:

● Անրապնդել միջարաքական Կորակցութիւնը:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ընկի. Յամիկ Տըրտը-եան 100 տոլար՝ ԼՕԽԻ Զրջանային Վարչութեան:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● «Մարտ 1» մտքով թեքած հայ մանուկներու օրուան առիթով, Չուարթնոց կեդրոնին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները. Ատանայի Շայրեմակցական Միութիւնը՝ 100 տոլար, տիկին Յասմիկ Սպրեան 50,000 Լ. ո.:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած՝ **ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵԹԵԱՆԻ ԱՐՈՒԵՏԱԳԵՏ - ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ**

Հանդիսապետութեամբ՝ **Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄԱ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Ընդառաջելով Համազգայինի Կեդրոնական Վարչութեան խնդրանքին, վեհափառը պիտի պարգևատրէ Մեծարեալը «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»-ի շքանշանով:

Տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:00ին, «ԿԻԼԻԿԻԱ» բանգարանի սրահին մէջ:

ԿԵՆՍՈՒՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԵՐԿՐԱԶՎՓՆԵՐՈՒ

Պետական պաշտօնեաներու հարցերու խորհուրդը կը յայտարարէ, որ քննութիւն - մրցանքով պիտի ընտրուին կենսոլորտի նախարարութեան համար կենսոլորտային մարզի գնահատական երկրաչափներ:

Քննութիւն - մրցանքին մասնակցելու համար դիմումները պէտք է ներկայացնել ամեն օրը Ընդգծաբքի, 28 Մարտ 2002ին, խորհուրդի կեդրոնատեղին, Ռաշիտ Զարամէ փողոց (Վերտօն):

Յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ճազդոյեան» կեդրոն:

ԸՆԿՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յակոբ Թնճուկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վիգէն Թնճուկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մելքոն Յակոբեան եւ զաւակունք Տիար Կիրակոս Թնճուկեան
Տէր եւ տիկին Ատոմ Թնճուկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Պետիկ Քահվէճեան եւ զաւակունք Կիւլեան ընտանիք
Յուլիանեան ընտանիք
Պարսամեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գորանչին եւ հարազատին՝

ՆԵՐՍԻՆԷ ԹՆՃՈՒԿԵԱՆԻ (Ծնեալ՝ ԿԻԼԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Մարտ 2002ին, Ապու ժառանգ չհաւանդանոցին մէջ:
Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ, Երեքշաբթի, 19 Մարտ 2002ին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նաքքաշ «Սիմիթեան» շէնք, 4րդ յարկ, Չորեքշաբթի 20, Հինգշաբթի 21 եւ Ուրբաթ 22 Մարտին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեսիրական հաստատութիւններու:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ» ՄԱՍՆԱՃԻՂ, ԱՅՆՃԱՐ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՐ

22ԷՆ 24 ՄԱՐՏ 2002 «ՈԱՃԻՏ ԶԱՐԱՍԷ» ՀԱՄԱԼԻՐԻՆ ՍԵՋ, ԹԻՒՓՈԼԻ Մասնակցութեամբ արաքական եօթը երկիրներու պետական երգչախումբերուն.

Սոյն փառատօնին Լիբանանը պաշտօնապէս պիտի ներկայացնէ՝ Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «ԿՈՍԻՏԱՍ» երգչախումբը

Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար **ՊԱՐԳԵՒ ԹԱՍԱԿԵԱՆ**

«ԿՈՍԻՏԱՍ» երգչախումբին լոյսը տեղի պիտի ունենայ Կիրակի, 24 Մարտ 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին:

ԵԱՆՕԹ.- Պետութեան կողմէ փոխադրամիջոցը ապահովուած է «Շարլ Ելու» կայարանէն (նաւահանգիստ), երբ ու դարձի սակ՝ 1000 Լիբ. ոսկի:

ՓՈՒՍՏՕՆԻՆ ՍՈՒՏԵՐ՝ ԱԶՍ

ԱՐԱՐՏԵԼՈՎ ՌՈՒՄԱՆԻԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՊԵՅՐՈՒԹ ՎԵՐԱԿԱՐՉԱԲ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Ռումանիա իր այցելութիւնը եզրափակեց եւ վերադարձաւ Պէյրութ:

Երէկ առաւօտ Հարիրի այցելեց Ռումանիոյ խորհրդարանը, որուն նախագահին՝ Վալերո Տորնիանոյի հետ ժողով մը ընթացքին քննարկեց երկու երկիրներու տնտեսական գործակցութիւնն ու Միջին Արեւելքի տագնապը: Հարիրի ապա այցելեց Ռումանիոյ ժեռակոյտի նախագահ Նիքոլայ Վիթարոյի:

Ռումանիայէն մեկնելէ առաջ Հարիրի հրաժեշտի այցելութիւն մը տուաւ իր պաշտօնակիցին՝ Ատրիան Նաթապիի:

Այս տեսակցութիւններուն ընթացքին կատարած իր յայտարարութիւններուն մէջ Հարիրի վերահաստատեց, որ Լիբանանի եւ Ռումանիոյ կապերը պատմական եւ սերտ են, եւ անհրաժեշտ է պարզացնել տնտեսական գործակցութիւնը:

Ան նաեւ ըսաւ, որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն կը հաստատուի, երբ իսրայէլ գործադրէ ՄԱԿի որոշումները եւ անոնց հիմամբ հեռանայ արաքական հողերէն եւ ստեղծուի պաղեստինեան պետութիւն:

ՊԸՐՐԻ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ՄՏԵՂԾԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՄԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ խորհրդարանականներու միջազգային միութեան 107րդ համագումարին արտասանեց խօսք մը, որուն մէջ կոչ ուղղեց կազմելու միջազգային խորհրդարանական քննիչ յանձնախումբ մը՝ հետաքննութիւն կատարելու պատերապմի ռճիրներու, ահաբեկչութեան եւ մարդկային իրաւանց վտանգաւոր խախտումներուն շուրջ:

Պըրրի հաւաստեց, որ եթէ յանձնախումբը ապաստօրէն չարժի, ապա անիկա տեղեկագիր մը պիտի ներկայացնէ պաղեստինցիներուն դէմ վտանգաւոր ռճիրներուն մասին:

«Այս ժողովը հրատապ հարցերուն վերաբերեալ կոչէր եւ առաջարկներ կատարելով կը բարարարուի, մինչդէռ կրնայ գործնական քայլեր առնել», ըսաւ ան:

Ժողովին ընթացքին իսրայէլեան Քննիչական նախագահ Արախամ Պըրկի խօսքը մկնելէն առաջ սրահէն քաշուեցան Լիբանանի, Սուրիոյ, Իրաքի, Իրանի, Լիպիոյ, Եմէնի եւ Սուտանի պատուիրակութիւնները:

ԾԱԽՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

60ԷՆ 90 քառ. մէքր տարածութեամբ արդիական կառոյց, Նահր էլ Սոթ, Օթոստրատ Ռումիի սկիզբը, «Սանքըր» Ն. ՏԵՏԵԱՆ: Դիմել՝ հեռ. 03 - 204309 քիւիմ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԷՍ

Նուիրուած՝ **ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻՆ**

Խօսք կ'առնեն՝ **ՎՐԵԺ ԱՐՄԵՆ - 25 տարուան մտերմութիւն**

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ - Գ. Օշականի գործի մտերմութեան մէջ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 25 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին, Յակոբ Տըր Սելընեան քառերասանին մէջ:

ՀՐԱԲԵՐ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Անդրանիկ Ժապարեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Ժապարեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Անդրանիկ Չոքաբեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ժորժ Խուրի եւ զաւակունք Տէր եւ տիկին Սեդրակ Յակոբեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, կեռոջ եւ հարազատին՝

ՄԱՐԳՐԻՏ ԺԱՊԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ՊԵՅՐՈՒԹ, 1924ԻՆ)

մահը, որ պատահեցաւ 19 Մարտ 2002ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Չորեքշաբթի 20, Հինգշաբթի 21 եւ Ուրբաթ 22 Մարտին:

ՆԱՍԱԿԱՆԻ

«ՏՈՒՌ ՆՍՏԻՆՔ, ՇԻՏԱԿ ԽՕՍԻՆՔ»

«ՄԵՏԱԼԻՆ ՄԻՒՍ ԿՈՂՄԸ»...

Շարունակելով մեր մնացած անդրադարձը լիթանահանրապետության դիմադրական կրթական տագնապին, ստորև տեղի կու տանք հետևեալ նամակին, որ կու գայ առեւի եւս ընդարձակելու քննարկումին ծիրը: «Ազգակ»ի խմբագրութեան ուղարկուած նամակը կու տանք չնչին լեզուական փոփոխութիւններով պահելով հանդերձ անոր ոճը եւ արտայայտութեան առանձնատեսակները:

Այո՞, ազատ կարծիքի արտայայտութիւնը յարգելու շրջագիծին մէջ նամակը կու տանք ամբողջութեամբ, այսուհանդերձ չենք կրնար չմատնանշել նաեւ կարգ մը միտքեր, որոնց գծով ունիք մեր վերապահութիւնները, եւ անհրաժեշտ է, որ այդ միտքերը լուրջ խորհրդածութեան առարկայ դառնան:

Գլխաւոր կէտը, որուն մասին պէտք է մտածել, այն է, թէ որո՞նք են իրական պատասխանատուները ներկայ կրթական եւ դպրոցական տագնապին: Սխալ կ'ըլլայ ամբողջ պատասխանատուութիւնը բարդել միայն մը միայն ծնողներուն վրայ, հակառակ անոր որ անոնք ալ իրենց հիմնական դերակատարութիւնը ունենցած են այս գծով:

Այս օրերուն մանուաւոր, երբ կրթական տագնապին մասին կը խօսուի այսքան սուր կերպով, չենք կրնար եղածին պատճառը նկատել միայն հայ ծնողքի անտարբեր վիճակը եւ օտարամոլութիւնը: Վերջապէս պէտք է նշել նաեւ, որ մեր ընկերութիւնը անհրաժեշտութիւնը ունի արժեքներու վերասահմանումի մը, որ պէտք է սկսի նախ եւ առջ ծնող-դպրոց-կրթական պատասխանատու յարաբերութեան, որովհետեւ ինչ որ յստակ դարձաւ վերջին շաբաթներու քննարկումներէն այն է, որ գոյություն ունի նաեւ այս երրորդութեան միջեւ վստահութիւնը ամրապնդելու եւ զօրացնելու հարցը:

Նամակին մէջ արտայայտուած միտքերը, սակայն, հակառակ իրենց կծու շեշտին, իրենց իրական ներդրումը վստահաբար պիտի ունենան մեր գաղութին արտաքին հարազատական հարազատութիւնը շեշտելու տեսակետէն:

ըր նախ պէտք է փնտռէք մեր հարուստ դասակարգին, նաեւ տղայ դասուն այն հողերանութեան մէջ, որ հարուստեց մեր հայկականութիւնը՝ դպրոցով, մշակոյթով եւ միութեանական կեանքով (ձեր մատնանշած կէտերն են ասոնք): Եթէ արարեք լեզուին պատուաւոր ու անսխալ հնչարանութեան, առողջանութեան մասին են այսքան իրարանցումները, հարաւոր տղարներու յանձնումը մեր ունեւոր ծնողներուն, դէպի այն օտար սնտուկները, ափսոս, այդպիսիք իրենց ծուկներուն պիտի զարնեն քիչ ետք (այսօր իսկ սկսած են արդէն), որովհետեւ Պէյրուսը շրջապատած բարձրագիւր բլուրներուն մէջ շնչող բարձրագոյններուն մէջ դժբախտաբար արարեք լեզուն չեն սորվիր, այլ առաւելաբար անգլերէն եւ ֆրանսերէն, քիչ մըն ալ ուրիշ լեզու մը: Ուրեմն, «արարեք լեզուն զօրուն թող սորվին» ըսող ծնողները սխալած են, որովհետեւ արարեք չեն խօսիր եւ պիտի չխօսին անոնք, քաղցրեցնութեամբ, չփաշտածութեամբ եւ մասամբ նորին: Ու լաւ իմացէք պարտն նամակագիրը, թէ մենք պաշտելու չափ կը սիրենք մեր երկիրն, արաբական աշխարհին լեզուն, զայն կը սորվեցնենք մեր զաւակներուն, հայերէնէն աւելի բարձր մակարդակի մը վրայ: Ու մենք գոհ ենք մեր խելացի եւ ընդունակ զաւակներուն «արարո՛ք»-ը: Անոնք նոյնիսկ կը շուրջեն նոյնիսկ տեղացի քաղաքացին, անոնք մեծ ըլլան թէ փոքր: Ու մեր այս վկայութիւնը «գիւնդութիւն» չնկատէք (կ'աղաչենք...):

Նշմարած էք, թէ ներկայ դպրոցական տագնապը դարձանելու ճիգեր կը փորձեն պատասխանատուներ: Այդ եւս կը համարէք «մեծ վագրէ» մը համարժէքը կամ ուժը չունեցող նախաձեռնութիւն: Ի՞նչ ընենք ուրեմն, ըսէք: Ի՞նչ լուծում կը թելադրէք: «Համապարփակ հրապարակային քննարկումներ»: Երանի թէ ձեր նամակներն զրած ըլլայիք երկու օր ետք, ներկայ ըլլալէ ետք «Յ. Տէր Մեղրեան» թատերասահին մէջ կայացած կլոր սեղանին, ի ներկայութեան երկրորդական վարժարաններու աշակերտութեան, ուսանողութեան, ուսուցիչներու, տնօրէններու եւ ծնողներու: Կը կարծենք, որ քիչ մը յուսատու պիտի ըլլար ձեր ակնհարար, կամ խճճանքը պիտի մեղմանար մասամբ:

Յարգելի բարեկամ, մենք «մեր հիւանդ ոչխարները» չենք փոխեր օտարին «առողջ գայլին հետ»: Այս փիլիսոփայութիւնը կու գայ Սահակ Պարթեւներէն: Օտարամոլութիւնը կը խեղդէ մեզ, որովհետեւ տեղեակ չենք մեր ազգային մշակոյթին, քաղաքականութեան: «Լեւոն Շանթ» Մշակութային կեդրոն մը ունինք Պուրճ Համուտի պարտին վրայ, որ հիացումի արժանի է: Հոն մշակոյթ եւ գեղարուեստ կը շնչեն մեր նորագոյնները: Ով որ աչք ունի, կը տեսնէ: Ձեր աչքերը դարձուցէք ձեր չորս կողմը, եթէ հրապարակի վրայ մշակութային միութեանական ձեռնարկները նուազած են, պատճառը փնտռեցէք Ամերիկա, Բարնաուտ, Աւստրալիա, Եւրոպա զաղթած մեր հարազատներուն քով: Գիտցէք, որ որակը կը ճնի քանակէն: Մարդու պակաս, դրամի պակաս, ու բոլորէն կը պահանջէ անցեալի օրերու նման լայնածիր ՇԱՐՃՈՒՄներ: Մեր թուած պատմություններուն վրայ ակաբեցուցէք օտարամոլ, քաղցրի մեր ծնողներուն դասակարգը, որոնք իրենց ծուկներուն վրայ դեռ նոր լեզուի ելլող մանկան կ'արգելին հայերէն բարբառի, անոր լեզուն վրայ շաքարի տեղ գետեղելով անգլերէն, ֆրանսերէն բառեր, որպէսզի «այդ լեզունով կտրուել գաւկին լեզուն»: Այս հոգեբանութեամբ անող ընտանիքներու զաւակներէն ի՞նչ կը յուսաք, պարտն Ատուրեան: Ուրե՞մն. յանցաւորները միայն ծնողներն են...

Մեզի ցոյց տուած ձեր «մտաւոր միւս կողմը» միայն այս պատկերը կայ: Հեռանալ հայութենէն... Ունեցանք այնպիսի ծնողներ, որոնք օտար վարժարաններու մէջ հայ աշակերտներու բազմութեան ի տես ուզեցին շարակցանկան նոյնիսկ մէկ պահ հայերէն դասաւանդել, մերժեցին առաջարկը՝ պատասխանելով տնօրէնին եւ զայն զարմացնելով, թէ՛ «մենք մեր զաւակները հոս բերինք, որպէսզի հայերէն չսորվին»: Անոնք են մեր յարգարան ու պատուական ծնողները: Ուրե՞մն ի՞նչպէս կ'ուզէք, որ գոյանայ «համապարփակ քննարկում»:

Յիշեցումը մը եւս ձեզի, յարգելի՛ հայրենակից՝ ձեր աչքերը դարձուցէք ձեր շուրջը. ազգային մեր գերազանց թէ ստորադաս մակարդակի կեանքին մէջ նուիրեալները եկած են մեր համեստ դասակարգէն, մասնաւորաբար հայկական վարժարաններէ: Երջանկալիչատակ Պարթեւին Բ. Կիրիկոյ գահակալը Բեսայի վարժարանէն եկաւ Անթիլիսիի դպրեվանդ: Արամ Ա. կաթողիկոս Բարանթիւնայի Ազգային Մեսրոպեան վարժարանի աշակերտ եղած է, ու անոնք այսօր միջազգային հարաւ վայելած են: Չեմ ուզեր յաջողած ազգայիններու շարքը թուել, զայն կատարել կը թողուէք ձեզի: Մեծամտութեան մի՛ վերագրէք նման արտայայտութիւն, ձեզի յիշեցնեք Պարոյր Սեւակի «Բիչ ենք, բայց հայ ենք» խօսքը...

Վերջապէս, անոնք, որոնք կ'արհամարհեն հայ դպրոցը, մեղանշած կ'ըլլան Մեսրոպ Մաշտոցի սրբութեան եւ յիշատակին: Եթէ կ'ուզէք օգնել Հայ Դպրոցին, ականջը քաշեցէք հոնէ հեռացողներուն, այդ «անտակ որդիներուն», որպէսզի վերադառնան հայուն օճախը, հայրենի տուն: Վերջին հաշուով ձուլուողը, կորսուողը իրենք պիտի ըլլան: Կ'ափսոսանք անոնց հաշուէն: Իսկ ձեզմէ կը խնդրենք մաքրել յեցիտա «մտաւոր միւս կողմը»:

Ս. ԳԱՐԵՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

ՄԱԿԻ զարգացման ծրագիրին հրապարակած տուեալներուն համաձայն, Հայաստան ներկայիս կը պատկանի միջին մակարդակի զարգացում ունեցող երկիրներուն շարքին եւ աշխարհի 162 այդպիսի երկիրներու շարքին կը գրաւէ 72րդ տեղը:

Միւս կողմէ, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներով, 1994 - 2001 թուականներուն ընթացքին Հայաստանի համայնաբան ցուցիչն արդիւնքը մէկ շունչի հաշուով նուազած է մօտ երկու անգամով, բնականութեան կէսէն աւելին (55 առ հարիւրը) կ'ապրի աղքատութեան նուազագոյն սահմանագիծէն ցած, իսկ 22,9 առ հարիւրը՝ մեծնդի սպառման նուազագոյն սահմանագիծէն ցած համարուող կենսապայմաններուն մէջ:

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՕՏԻՆ ԿԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԻ

Հայաստանի սահմանամերձ անտառային տարածութիւնները վերականգնելու նպատակով «Անտառային Գիտափորձարարական կեդրոն» ընկերութիւնը անցեալ տարուին սկսած է վրաստանի Մառնի լիճի շրջանի 8 գիւղերուն (Ջրապէյճանարնակ) սահմանակից ձիւղի վրայ 62 քիլոմետր երկարութեամբ անտառային գօտիին մէջ:

300 հեկտար տարածքի վրայ այս տարի պիտի ստեղծուի սահմանային անտառային շերտ մը, որը պիտի տնկուին բարձրաժէք, հազուադիւս եւ անհետացող ծառի տեսակներ, պիտի իրականացուին անոնց հետազոյս խնամքի եւ պահպանութեան աշխատանքները:

Կը նախատեսուի անտառային վերականգնումի աշխատանքներ կատարել մինչեւ 3400 հեկտար տարածութեան վրայ (պիտի տնկուի մօտ 3,2 միլիոն տունկ), որ պիտի կազմէ շրջանի անտառային վերականգնման ծաւալին 60 առ հարիւրը:

ԱԻԵԼԻ ՔԱՆ 123 ՀԱՋԱՐ ԶԲՕՍԱՇՐՋԻԿ

Անցեալ տարուան ընթացքին Հայաստան այցելած է 123,262 զբօսաշրջիկ, ինչ որ նախորդ տարուան ցուցանիշէն աւելի է մօտ 45 առ հարիւրով:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն, Հայաստան այցելած զբօսաշրջիկներուն 22 առ հարիւրը ԱՊՀ-ի երկիրներէն է, 30,2 առ հարիւրը՝ Եւրոպական Միութեան երկիրներէն, 20,5 առ հարիւրը՝ Միացեալ Նահանգներէն: Նոյն ժամանակաշրջանին, զբօսաշրջութեան նպատակով Հայաստան էին դուրս եկած է 109,976 հոգի: Ներքին զբօսաշրջութեան ցուցանիշը կազմած է մօտ 27 հազար մարդ:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կիրակի, 17 Մարտ 2002ի երեկոյեան ժամը 4:00ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ քրիստոնեայ երիտասարդական միութիւններու միջկեղեցական հաւաք մը, հովանաւորութեամբ Արամ Ա. կաթողիկոսին եւ վարչականութեամբ Հայաստանեայց Եկեղեցու Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ): Համագումարին նիւթն էր «Երիտասարդութեան վերադարձը յարութեան ճամբով», որուն թեան վերագրուած յարմարութեան միութիւններու ներկայացուցիչներ:

Բացման խօսքը կատարեց ՀԵՀՈՄի հոգեւոր խորհրդատու Վրդ. Տեմիրճեան, բարի գալուստ մաղթելով բոլորին, ինչպէս նաեւ շեշտելով նման հանդիպումներու անհրաժեշտութիւնը երիտասարդութեան կեանքին մէջ:

Յանուն Արամ Ա. կաթողիկոսին խօսք առաւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Սաչերեան, որ հուշարկուեցնելու յայտնեց հանդիպման կայացման առիթով:

Ապա յարգաբար ելոյթ ունեցան Պէյրուսի յոյն ուղղափառ, մարտի, աւետարանական, ասորի կաթողիկ, ասորի ուղղափառ, հայ աւետարանական, դպրի եւ հայ առաքելական համայնքներուն պատկանող երիտասարդական միութիւններու ներկայացուցիչները: Իւրաքանչիւրը ներկայացուց իր միութեան պատմականը, գործունէութիւնը եւ յառաջիկայ ծրագիրները: Յայտագիրին մաս կը կազմէին շարք մը աղօթքներ, աստուածաշնչական ընթերցումներ եւ շարականներու երգեցողութիւն:

ՀԵՀՈՄի անունով խօսք առաւ Մարալ Չորոյեան, իսկ հայ եկեղեցու շարականներու երգեցողութիւնը կատարեց Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու երգչախումբը՝ ղեկավարութեամբ Գէորգ Պէպէճեանի:

Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՔՈՉԱՐԵԱՆ - ԳԱՐԵԳԻՆ Բ. ՀԱՆԴԻՊՈՒՄ



13 Մարտին Հայաստանի նախագահ Քոչարեան եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս ունեցան հանդիպում մը, որուն ընթացքին միասնաբար քննեցին պետութիւն-եկեղեցի փոխյարաբերութիւններու առնչուող հարցեր:

Եկեղեցին նկատելով իբրեւ հոգեւոր արժեքները խորացնող եւ պահպանող համազգային կառույց, նախագահ Ռոպէյթ Քոչարեան ընդգծեց եկեղեցույ առանցքային դերը՝ հայ ժողովուրդի կեանքին մէջ հոգեւոր եւ բարոյական զարթօնը յառաջացնելու, ինչպէս նաեւ երկիրն մէջ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ստեղծելու իմաստով:

ՊԱԵՆ - ՃԵՅՏԱՆ ԶԱՐԻՂԱՍԱՐ 3ՈՒՆԻՍԻՆ ԿԸ ՍԿՍԻ ՔԱՐԻԻՂԱՏԱՐԻՆ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու արտաքին դործոց նախարարի խորհրդական էլիզաբէթ Ճոնզ յայտարարած է, որ Պաքո - Ճէյհան քարիւղատարին կառուցումը պիտի սկսի Յունիսին, ամբիկեան եւ ուսուական ընկերութիւններու մասնակցութեամբ: «Վրեմիա Փօ» թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ է. Ճոնզ նշած է, թէ ներկայիս կը կատարուին ճարտարագիտական հետազոտութիւններ, որոնց մասին հաշուետուութիւնը կը ծրագրուի հասարակութեան ներկայացնել Մայիսին:

Advertisement for 'ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ' (ALEX MANOUKIAN CENTER) located at 'ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԸ' (MESHAKHOUTAYIN HANZHANOHUM). It is a 'ՀԻՉ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ ՄԵՐ' (HERE AND THERE WITH US) '«ԱԶԳԱՅԻՆ» ԿԱՌՈՅՑՆԵՐԸ' (AZGHAYIN KAHOYTSNER). The address is '«ԱԶԳԱՅԻՆ ՍԱՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ» ԿՊՐԻՍՍԱԿԵՆ' (AZGHAYIN SAMANADROUTHUN KOPRISSEKEN). It is located 'Կը մեկնաբանէ ՄԵՐՈՒ ՔԱՍՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ' (HERE IN THE MARKET SQUARE). The date is 'Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնի մէջ, Ութուրաբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ՆՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԼԵՀԱՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Եան Օլյարաչի, Ալեքսանտր եւ յատկապէս Սիկիսմունտ Ա. Թագաւորներու ժամանակաշրջանին լեհահայ գաղթօճախները կրկին անգամ վերստացան ինքնավարութիւն եւ այլ իրաւունքներ: Հայեր կարեւոր պաշտօններ ստանձնեցին երկրի սահմաններու պաշտպանութեան մէջ եւ կազմուեցաւ լեհահայոց Դատաստանագիրքը: միաժամանակ շարունակուեցան Մոլտաւիայի ղէպի Լեհաստան հայերու գաղթները:

ԵԱՆ ՕԼՊԱՐԱՉԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵՆԸ ԵՏՔ. ՀԱՅԵՐԸ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՀՈՒՍՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՅ

Քաղկիդիոնի Դի երկրորդ զաւակը՝ Եան Օլյարաչի (Յովհաննէս Ալյէրթ) ծնած էր 27 Դեկտեմբեր 1459ին, Քրաքով: Քաղ ու մարտունակ նկարագիրով՝ ան թաթարներուն դէմ պատերազմի գնաց եւ 1487ին Քոփիսմոնիոսի ու Չասուաւի 1491, կռիւներուն յաղթանակներ տարաւ: Հօր մահէն ետք, 1492ին, լեհ ազնուականութեան կողմէ ան թագաւոր ընտրուեցաւ (մեծ եղբայրը՝ Վլադիսլաւ 1471էն Պոճեմիոյ եւ 1490էն Հոլանդարիոյ թագաւորն էր):

Գահ բարձրանալէն ետք, Եան Օլյարաչի որոշեց բարեկարգումներ կատարել. ազնուականներու հաւաքը 1493ին կոչուեցաւ սենատ եւ օրէնսդրական նոր մարմինով օժտուեցաւ: Կազմուեցաւ նաեւ ազգային սէյմը (խորհրդարան):

Եան Օլյարաչի, գիտակից՝ հայերու ներկայացուցած տնտեսական ուժին եւ կարեւորութեան՝ առեւտուրի, արհեստներու եւ այլ մարգերու մէջ, աշխատեցաւ սիրաշահել զանոնք: Թագաւորը նկատի ունէր նաեւ այն հանգամանքը, որ Լեհաստանի հարաւարեւելեան սահմանները անապահով դարձած էին, թուրքերու սպառնալիքը հետզհետէ աւելի կը շեշտուէր, տեղացի ռուսները (ներկայ ուրբանայացիներ) եւ հրեաները այնպէս ալ վտանգելի չէին բարեկարգութեան համար, եւ լեհներու կողմէ, իրենց ջրջանը պաշտպանող զլխաւոր ուժ կը մնային հայերը:

Թագաւորը ամէնէն աւելի իր ուշադրու-

ձաւ իւրազգի Տուխնովիչ, որ արքունիքին մէջ թարգմանի պաշտօն ստանձնեց «Բուկիբուլարիոս Ռեճիսայէ մաէսլաթիս» (cubicularius regiae maiestatis) տիտղոսով. ան թագաւորին անձնապէս վարձատրութիւն կը ստանար: Անոր զաւակը՝ Վասիլ Կիլկա եւս բարձր պաշտօն ստանձնեց եւ շարունակեց հօր գործը: Նշենք, որ Վասիլ Կիլկայի մահէն ետք անոր այրին եւ որբերը Լվովի քաղաքային իշխանութեան հոգատարութեան եւ խնամքին յանձնուեցան:

ՄՈՒՍՏԱՒՈՒՆՔ ԵՒ ԹԱԹԱՐՆԵՐՈՒ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՐ. ՀԱՅԵՐՈՒ ԳԱԿԹ ԴԵՊԻ ԼՎՈՎ

Օսմանեան բանակը, Կաֆան, Քիլիան եւ Աքքերմանը իրրեւ խարխիս ունենալով, սպառնալիք մը դարձած էր Լեհաստանի սահմաններուն: Եակիբլուններու պետութեան դէմ յաճախակի յարձակումներով, օսմանցիք ամէնուրեք ահ ու սարսափ տարածած էին:

Լեհաստանի ղէպի արեւելք ուղիները անապահով դարձած եւ գրեթէ կտրուած էին, իսկ առեւտուրը՝ նուազագոյնի իջած, թէեւ հայ առեւտրականներ միշտ ալ զանազան ճանապարհներով կը յաղդէին կարաւանային ուղեւորութիւններ կատարել:

Լեհաստան սկսաւ դիմադրուել նաեւ խրիմի թաթարներուն թշնամութիւնը, որոնք օսմանեան գերիշխանութեան տակ՝ Կալիցիոյ ու արեւելեան Լեհաստանի վրայ յաճախակի յարձակումներով գերիներ եւ աւար կը վերցրնէին:

Երկրին սպառնացող վտանգը նկատի ունենալով՝ Եան Օլյարաչի որոշեց նախապարձակ ըլլալ: Առաջին հերթին՝ 1497ին ան Մոլտաւիոյ դէմ արշաւանքի ձեռնարկեց, որովհետեւ անոր հոսպոտարը՝ Շթեֆան Մեծ չէր ուզած միանալ իրեն: Եան Օլյարաչի որոշած էր ամէն գնով գրաւել մանաւանդ Քիլիան եւ Աքքերման ամրոցները, որպէսզի ապահովէ Դանուբի եւ Տիբեթի վրայ իր գերիշխանութիւնը: Եան Օլյարաչի իր եղբայրը՝ Սիկիսմունտը նշանակեց Մոլտաւիոյ գահին վրայ: Բայց երբ լեհական զօրքերը սկսան յառաջանալ Մոլտաւիոյ խորքերը, կատաղի դիմադրութեան հանդիպեցան Շթեֆան Մեծի բանակին կողմէ եւ ծանր պարտութիւն կրեցին Սուչաւայի անտառներուն մէջ:

Այս ժամանակ Սուչաւայի կարեւոր թիւով հայեր լեհական սահմանը անցան եւ Լվովի ու յարակից բնակավայրերուն մէջ հաստատուեցան: Սուչաւայի հայերը արդէն աշխուժ կապեր ունէին Լվովի հետ եւ՝ փոխադարձաբար. շատեր նաեւ ծանօթ էին այդ շրջաններուն: Իրրեւ ապացոյց նշենք, որ Լվովի քաղաքային դատարանը 1493ին զբաղած էր սուչաւայցի Ասատուրի (կամ Աստուածատուր) խնդիրով, իսկ Լվովցի Քրիսթոֆ Ֆուրթաթ Սուչաւայի մէջ Սթեցքօ (Cieczo) հայուն համար մաքսի ծախսեր վճարած էր:

Սիկիսմունտը, օսմանցիներու օժանդակութեամբ, 1498ին ներխուժեցին Լեհաստան՝ ամէնուրեք աւերելով բնակավայրերը եւ կողոպտելով, գերեզմաններով ու ջարդելով անոնց բնակիչները. ծանր կացութեան մատուցան նաեւ հայերը: Թաթարներ 1499ին հասան մայրաքաղաք Քրաքով՝ սպառնալով Լեհաստանի գոյութեան: Նոյն օրերուն Մոլտաւիա եւս օսմանեան գերիշխանութեան տակ անցաւ եւ թաթարներու յարձակումներուն ենթակայ դարձաւ:

Ստեղծուած ճգնաժամային կացութեան առջեւ Եան Օլյարաչի կազմակերպեց իր բանակը եւ ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնելով՝ հակապարձակուժի անցաւ: Կալիցիան եւ Փոտոլիան, հայկական հոծ բնակչութեամբ շրջանները, արիւնահեղ կռիւներու թատերաբեմ դարձան: Լեհական բանակը կարող յաղթանակներ տարաւ, որոնցմէ ետք Գալիցիոյ յաղթանակներ արեւելեան սահմաններուն վրայ: Թաթարներ 1500ին ծանր պարտութիւն կրեցին:

Եան Օլյարաչի այնուհետեւ պատրաստուե-

ցաւ իրեն վասալ նկատուող Տեւտոնեան միաբան ու լեհական Ֆրեմտերիք Սաքսոնի ղէմ Փրուսիոյ իրար շաւաւնքին, բայց 17 Յունիս 1501ին մահացաւ Թորունի մէջ:

ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՂՄԵ ՆՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ԿԱՄԵՆԵՑԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Եան Օլյարաչի յաջորդեց եղբայրը՝ Ալեքսանտր. ան ծնած էր 5 Օգոստոս 1461ին, Քրաքով, եւ 1492ին Լիթուանիոյ մեծ դուքս հռչակուած էր: Գահ բարձրանալէն ետք ան աշխատեցաւ սանձել սենատին եւ ազնուականութեան հեղինակութիւնը:

Հակառակ ներքին ճակատի վրայ ազատութիւններու կաշկանդումին, թագաւորը, գիտակից՝ հայերու ներկայացուցած ուժին ու կարեւորութեան, յարգեց անոնց իրաւունքները եւ 1502ին նոր իրաւասութիւններ ու արտօնութիւններ տուաւ կամեհէցի հայերուն:

Այս ժամանակ իվան Գ. ցարը միացաւ խրիմի թաթարներուն եւ Լիթուանիոյ վրայ յարձակելով գրաւեց Օքս եւ Տեւան գետերուն միջեւ տարածուող իշխանութիւնները եւ հասաւ Տիբեթի գետի հովիտը: Ալեքսանտր թագաւոր իր կինը՝ Հելենան, որ ցարին դուստրն էր, իրրեւ պատուիրակ ղրկեց հօրը մօտ, որպէսզի միջնորդէ իր եւ աներոջ միջեւ: Նոյն օրերուն Լեհաստան, Մոլտաւիոյ հոսպոտար Շթեֆանի մահէն ետք, իր գերիշխանութիւնը տարածեց Դանուբի ափերուն:

Լեհաստանի արեւելեան սահմանին վրայ ստեղծուած անապահովութիւնը եւ, միւս կողմէ, Դանուբի ափերուն վրայ դերակառութիւնը պատճառ դարձան, որ ղէպի Պալմիք ծովու ափեր կատարուող առեւտուրը, ուր կարեւոր ներկայութիւն էին հայերը, տկարանայ, իսկ Սեւ ծովու վրայ առեւտուրը (ուր դարձեալ հայերը տիրական ներկայութիւն էին) վերաշխուժանայ:

Ալեքսանտր թագաւոր մահացաւ 19 Օգոստոս 1506ին, Վիլնիուսի մէջ:


ՍԻԿԻՍՄՈՒՆՏ Ա.Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵՆԸ ԵՏՔ. ՊԱՅՔԱՐ ԼՎՈՎԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԵՒ ԼԵՀԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

Ալեքսանտր թագաւորի մահէն ետք անոր յաջորդեց եղբայրը՝ Սիկիսմունտ (Չիկիսմոնթ): Ան ծնած էր 1 Յունուար 1467ին եւ Քաղկիդիոնի ու Էլիզապէթ Հապսուրկի հինգերորդ զաւակն էր: 1499ին ան Սիկիզիոյ կողմու շրջանի ղեկավար եւ Լուսաթիոյ մարքիզ հռչակուած էր, իսկ 1504ին ամբողջ Սիկիզիոյ կառավարիչը դարձած էր: Երբ եղբայրը՝ Ալեքսանտր Լեհաստանի թագաւոր եղած էր, ան Լիթուանիոյ մեծ դուքս հռչակուած էր: 1506ին ան Լեհաստանի թագաւոր հռչակուեցաւ Սիկիսմունտ Ա. անունով:

Գահ բարձրանալով՝ Սիկիսմունտ Ա. արմատական բարեկարգումներու ձեռնարկեց եւ առաջին հերթին առանձին հրովարտուող մը հայ վաճառականները ազատ կացուցանեց մաքս վճարելու պարտաւորութենէն: Այնուհետեւ, 1507ին ան հաստատեց Կամեհէցի հայերուն իրաւունքները եւ նոր արտօնութիւններ տուաւ անոնց:

Այս ժամանակ Լվովի տեղական իշխանութիւններուն եւ հայերուն միջեւ պայքար մը ծայր առած էր. լեհ քաղաքային իշխանութեան որոշումով 1510ին հայոց վոյթը (քաղաքապետ) զրկուեցաւ անշարժ գոյքերու վերաբերեալ գործերուն քննութեան իրաւունքէն, սակայն միւս գործերը շարունակեցին մնալ անոր իրաւասութեան տակ:

Լվովցի հայերուն եւ լեհերուն, բայց յատկապէս լեհ քաղաքապետին ու հայ վոյթին միջեւ պայքարը սաստկացաւ եւ հասաւ հոն, ուր պետութիւնը հարկադրաբար միջամտեց, եւ հետաքրքրական է նշել, որ հայոց կողմը ընդհանրապէս չվշտացնելու համար իր «հաւատարիմ եւ սիրելի քաղաքացիները»:



Լվովի հայկական եւ լեհական իշխանութիւններուն միջեւ տագնապը իր գագաթնակէտին հասաւ 1518ին, երբ Լվովի քաղաքային դատարանը առանց հայկական իշխանութեան գիտութեան եւ հաւանութեան գատեց հայ երիտասարդ մը՝ Իվաչկոն եւ լեհ երիտասարդուհի մը՝ Սոֆիան, անոնց ապօրինի կենակցութեան համար եւ մահուան դատապարտեց զանոնք, խարոյկի վրայ այրելու միջոցով: Մահապատիժը գործադրուեցաւ հրապարակաւ: Դէպքը մեծ յուզում յառաջացուց հայերուն մէջ, որովհետեւ անիկա գործադրուած էր առանց նկատի ունենալու հայկական իշխանութեան կարծիքը եւ բացայայտ ու կանխատեսուած բռնարարում կը նկատուէր հայութեան վայելած ներքին դատական իրաւունքները:

Ի վերջոյ, հայկական իշխանութիւնը բողոքեց արքունիքին՝ Լվովի իշխանութեան ապօրինի գործունէութեան եւ վճիռին համար: Արքունիքը իրաւացի գտաւ հայերուն բողոքը, տուգանքի ենթարկեց լեհ քաղաքապետն ու քաղաքապետութիւնը եւ յանձնարարեց անոնց՝ ըսելով, որ երբ հայերը մեղսակից են ուրիշ ազգի մարդոց հետ, անոնց մասին որոշումներ չկայացնեն առանց հայկական իշխանութեան հաւանութեան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիկիսմունտ թագաւոր Հոլանդարիոյ հետ յարաբերութիւնները բարելաւելու եւ հետագային իր ազդեցութիւնը անոր վրայ տարածելու նպատակով 1512ին ամուսնացաւ իշխան Շթեֆէն Զափոլիայի դստեր՝ Պարպարայի հետ: Այս ամուսնութեան շնորհիւ խաղաղութիւն հաստատուեցաւ երկու երկիրներուն միջեւ, սակայն Պարպարա մահացաւ 1515ին՝ աղջիկ ժառանգորդներ միայն ձգելով:

Սիկիսմունտ այս անգամ Հռոմէական Սրբազան կայսրութեան հետ կապերը ամրապնդելու նպատակով 1518ին ամուսնացաւ Մաքսիմիլիան կայսեր ազգական Միլանիոյ Պոնա Մֆորթա իշխանուհիին հետ, որմէ ունեցաւ արու զաւակ մը՝ Սիկիսմունտ Բ. Օգոստոս եւ չորս աղջիկ: Աղջիկներէն մէկը ամուսնացաւ Շուէտի Եոհան Գ. թագաւորին հետ. անոնցմէ սերած է վասա արքայատոհմը:

ԼԵՀԱՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Սիկիսմունտ Ա., լեհական տեղական իշխանութիւններու եւ հայ համայնքներու վէճերուն վերջ տալու նպատակով, 1518ին, Լվովի հայ աւագներու խորհուրդէն պահանջեց լեհահայոց Դատաստանագիրքը լատիներէնի թարգմանել: Դատաստանագիրքը լեհահայ գաղթօճախներուն մէջ օգտագործուող օրէնքներու ժողովածուն էր, որ կազմուած էր Միլիթր Գոշի Դատաստանագիրքին եւ տեղական իրաւունքի օրէնքներու համադրման ու համակարգման հիման վրայ: Անիկա սկսած էր օգտագործուել ԺԳ. - ԺԴ. դարերէն:

Թագաւորին պահանջին համաձայն, Դատաստանագիրքը նոյն տարին իսկ թարգմանուեցաւ եւ ապա որոշ փոփոխութիւններով վաւերացուեցաւ 1519ին, Փիտտրկով քաղաքին մէջ հրաւիրուած լեհական սէյմին կողմէ եւ հաստատուեցաւ Սիկիսմունտ թագաւորին կողմէ: Անիկա ծանօթ դարձաւ «Լվովեան Դատաստանագիրք» կամ «Լեհահայոց Դատաստանագիրք» անունով:

Դատաստանագիրքը 1528ին թարգմանուեցաւ հայատառ դիւանագրէնի եւ լեհերէնի: Մինչեւ ԺԸ. դար անիկա օգտագործուեցաւ իրենց դատական ինքնավարութիւնը պահպանած լեհահայ ըլլող գաղութներուն մէջ:



Հայկական սրբանկար Կտանցի մատրան մը մէջ:

թիւնը կեդրոնացուց կամեհէցի հայութեան վրայ. կամեհէց երկրին հարաւարեւելեան սահմանամերձ եւ սահմանապահ քաղաքն էր Տիբեթի ճիւղի հովիտին մէջ, որուն բնակչութեան կարեւոր համամասութիւնը հայերն էին: Եան Օլյարաչի 1496ին հաստատեց կամեհէցի հայութեան դատական ինքնավարութեան իրաւունքը:

Կամեհէցի հայերը այս ժամանակներէն սկսեալ կարեւոր դերակատարութիւն ստանձնեցին Լեհաստանի սահմաններու պաշտպանութեան մէջ եւ այնուհետեւ ձեռնարկեցին ամրակուլ ամրոցի մը կառուցման, որ ծանօթ դարձաւ Հայկական ամրոց անունով (անիկա պահպանուած է մինչեւ օրս): Պետական եւ արքունական շրջանակներու մէջ եւս հայեր պատասխանատու պաշտօններու կոչուեցան. ամէնէն աւելի ազդեցիկ դար-

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ
ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ՇԱՐԱԹ ՕՐ՝ 3. Մ. Մ. - 3. Մ. Ը. Մ.



Նախագահ զոր. Էմիլ Լահուտ Մայրիներու
շքանշանը կը յանձնէ
Մոհամէտ Պըն Համամ Ապտալլայի:

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը իր հերթական ժողովին շնորհակալութիւն յայտնեց նախագահ զոր. Էմիլ Լահուտի, որ Մայրիներու սպայից կարգի շքանշանով պատուեց Ասիոյ ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Մոհամէտ Պըն Համամ Ապտալլային:

Ֆետերասիոնը յայտնեց, թէ իր առած այդ քայլով նախագահ զոր. Էմիլ Լահուտ կը փաստէ, որ մօտէն հետաքրքրուած է Լիբանանեան մարզական շախարհով, իսկ այս պարագային՝ ֆուտբոլով:

Մոհամէտ Պըն Համամ Ապտալլա, Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին, յատուկ տեղեկութիւններ փոխանցեց, անցեալ Հինգշաբթի, 14 Մարտին Քուայա Լամփուրի մէջ (Մալեպիա) Ասիոյ ֆուտբոլի ֆետերասիոնի յանձնախումբին կատարած ժողովներուն արդիւնքներուն մասին:

Ֆետերասիոնը վաերացնելէ ետք, անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած 17րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, յայտարարեց այն մարզիկներուն անունները, որոնք դեղին քարտ ստացած էին: Անոնք են. Վարդան Չիլքիլեան (< Մ. Ը. Մ.), Շէտի Համատա, Մոհամէտ Սանթիա. Հրէյն Հասուն, Հասան Սթանպուլի, Քասեմ Տահեր, Մատիո Քոնաթի (Ալի Սալտա), Ռիսամ Չէյտան, Մահմուտ Մաժիտ Նահիմի, Եասեր Մանսուր (Շապապ Սահէլ), Ժիհատ Քընան, Խալիլ Ալի, Մուսթաֆա Չիլքիլեան (Պըրժ), Ալի Քանիպ, Պասել Թալէպ, Նապիլ Շէյխօ (Սաֆա), Տէյվիտ Ամանի, Եուսէֆ Ժաուհարի (Ատ), Հասան Նասրալլա (Թատամն Սուր), Սամպա Քոբսիա, Ուրիպի Տուէյիի (Սալամ), Իսա Ռամատան (Սաժէս), Ապալէ Շահրուր, Հասան Հըբէյնի, Չէյն Ապիտին Սատա (Նըժմէ), Ահմէտ Շուժ, Մոհամէտ Մաթար, Պիլապ Չաղլուլ (Անսար), Ռամի Սապուհի (Ալիս Ալէյ) եւ Շահէ Գասպարեան (Ռասիկ):

Շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներէն կախակալուած ըլլալով՝ ուր մարզիկներ դաշտ պիտի չներկայանան (իրենց երրորդ դեղին քարտը ստացած ըլլալուն համար), մինչ երկու ուրիշներ երկուքական մրցումով կախակալուած են: Այդ ուր մարզիկներն են՝ Հիւսէյն Հասուն (Ալի Սալտա), Մահմուտ Մաժիտ Նահիմի (Շապապ Սահէլ), Մուսթաֆա Չիլքիլեան (Պըրժ), Ալի Քանիպ, Պասել Թալէպ (Սաֆա), Սամպաքուր Սիս (Սալամ), Ահմէտ Շուժ (Անսար) եւ Միկեր Պէրպէրեան (< Մ. Ը. Մ.): Իսկ երկուքական մրցումով կախակալուած մարզիկներն են՝ Հըբէյն Թահիս (Պըրժ) եւ Հըբէյն Սուէյտան (Շապապ Սահէլ):

Ֆետերասիոնը կը յայտնէ, թէ Բ. դասակարգին մաս կազմող երկու խումբեր՝ Շեպիպ (Բ. խմբակ), փոխադրուած են Գ. դասակարգ 2002-2003 եղանակէն սկսեալ: Իսկ Բ. դասակարգին մաս կազմող չորս խումբեր՝ Օլիմպիկ Պէյրութ, Մապարա (Ա. խմբակ), Իթիմահի եւ Շապապ Սիս (Բ. խմբակ) իրենց մասնակցութիւնը պիտի բերեն աւարտական մրցումին, Ա. դասակարգին համար տոմս մը կարենալ ապահովելու նպատակով:

ՄՍՈՐԵԻ՝ շաբաթավերջին տեղի ունենալիք Ա. դասակարգի ախոյեանութեան 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, որ կրած է կարգ մը փոփոխութիւններ.

ՇԱՐԱԹ, 23 ՄԱՐՏ	ԺԱՄ	ՊԱՇՏ
Ահլի Սալտա - Ռասիկ	3:00իԳ	Սաֆա
Հ. Մ. Մ. - Հ. Մ. Ը. Մ.	4:45իԳ	Պէյրութ

ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՐՏ	ԺԱՄ	ՊԱՇՏ
Սաժէս - Անսար	3:00իԳ	Պ. Համուտ
Սալամ - Սաֆա	3:00իԳ	Թրիփոլի
Թատ. Սուր - Ալիս Ալէյ	4:45իԳ	Պէյրութ
Պըրժ - Նըժմէ	4:45իԳ	Մ. Անս

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏ	ԺԱՄ	ՊԱՇՏ
Անտ - Շապապ Սահէլ	3:00իԳ	Պէյրութ

«ՉԵՍՓԻՆԶ ԼԻԿ»

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ԼԻՎՈՐՓՈՒԼ ՇԱՍԱՆ ԲԱՌՈՐԴ ԱԲԱՐՏԱԿԱՆ

«Չէմփիրնզ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարին Բ. հանգրուանի դարձի վերջին հանգրուանի մրցումներուն, երէկ Բ. խմբակէն ներս արձանագրուեցան անակրկալներ, երբ Պարսելոնա եւ Լիվորփուլ յաղթանակներ արձանագրելով ապահովեցին քառորդ աւարտական հանգրուանին իրենց տոմսերը:

Ա. խմբակին պատկերը արդէն իսկ յստակացած ըլլալով բոլորին ալ նայուածքներ ուղղուած էին Բ. խմբակին վրայ:

Պարսելոնա ֆուտբոլի լաւ դաս մը տուա Թուրքիոյ Կալարսարային, երբ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց անոր դաշտին վրայ: Լուիս Էնրիքէի կողմէ նշանակուած կողմ (58րդ) բաւարար եղաւ, որ թրքական կազմը դուրս մնայ մրցաշարէն:

Խմբակին վերջին դիրքը գրաւող Լիվորփուլ արձանագրեց իր առաջին յաղթանակը «Էնֆիլտ»ի մէջ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Ա. Էս. Ռոման: Եարի Լիթմանը (7րդ) փենսիթով եւ Էմիլ Հէսքի (64րդ) նշանակեցին անկրկական խումբին երկու կողմերը:

Այսպիսով, Պարսելոնա հանդիսացաւ սպանական երրորդ խումբը, որ հասաւ քառորդ աւարտականին, Ռէյալ Մատրիները ուղղուած էին Բ. խմբակին վրայ:


Մտորեա՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:
●Գ. ԽՄԲԱԿ
Փանթիֆա (Յուճաստան) - Ռէյալ Մատրիս (Սպանիա)
Սիարթա Փրակա (Չէխիա) - Փորթօ (Փորթուգալ)
●Դ. ԽՄԲԱԿ
Տեփորթիօ Զորուճա (Սպանիա) - Պայէր Լեւրքուզը (Գերմանիա)
Եուվենթուս (Իտալիա) - Արսենալ (Անգլիա)

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՍԵԼԹԻՔՍ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԻՐ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Պոսթըն Սելթիքս իր դաշտին վրայ 100-91 արդիւնքով պարտութիւն մը կրեց Փորթլէսթըրի Պլէյլըքսին, որ իր կատարած վերջին 16 մրցումներուն արձանագրեց իր 15րդ յաղթանակը: Հակառակ անոր, որ Սելթիքսի մարզիկ Փոլ Փիրս նշանակեց 28 կէտ եւ 8 ռիպուստ, իսկ անոր խմբակից Անթուան Ռոքըրը՝ 19 կէտ եւ 9 էփսթ, անոնց կազմը պարտուեցաւ: Պլէյլըքսի մարզիկ Պոպի Ռեյլ նշանակեց 20 կէտ:

Ուաշինկթըն Ուիչարտը արձանագրեց եղանակի իր 31րդ յաղթանակը 99-96 պարտութեան մատնելէ ետք Էն. Պի. Էյ.ի ամենէն տկար խումբերէն՝ Կոլտըն Սթըյթ Ուորիորը:
Լոս Անձելըսի մէջ Բլիթթըր 93-86 արդիւնքով պարտութեան մատնեց Հիուսթըն Ռոքեթը:



Թրէյսի Մաքկրէյտի (թիւ 1) եւ Թիմ Հարտըրըյ (թիւ 10):

Պլէյլըքս - Պոսթըն Սելթիքս 100-91
Շարլոթ Հոննէթց - Միլուոքի Պաքս 113-110
Տիքսոնիք Փիսթընզ - Տէնզըր Նակէթց 98-91
Լոս Անձելըս Բլիթթըր - Հիուսթըն Ռոքեթց 93-86
Ուաշինկթըն Ուիչարտը - Կոլտըն Սթըյթ Ուորիոր 99-96

Մտորեա՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:
Նիւ Ճըրքի Նէթց - Բլիթթըն Քաւաիթց
Ֆիլադելֆիա Սիթթըրզ - Մայնի Հիթ
Նիւ Եորք Նիքս - Մէմֆիս Կրիպիդ
Թորոնթօ Ռեփթըրզ - Միլուոքս Կոլտըն Սթըյթ Պաքս - Օրլանտօ Մէճիք
Արլանտօ Հոքս - Շիքաքօ Պուլզ
Լոս Անձելըս Լէյքըրզ - Տալաս Մալթրիքս
Տիքսոնիք Փիսթընզ - Եուրա Ճէյ
Կոլտըն Սթըյթ Ուորիոր - Սիթթըլ Մուլթրոնիքս
Հիուսթըն Ռոքեթց - Սաքրամենթօ Քինկզ



Պոնգի Ուելզ՝ կողով մը
Գշտակած պահուց:

քով պարտութեան մատնեց Հիուսթըն Ռոքեթցը: Իր կատարած վերջին երեք մրցումներուն Բլիթթըր կրած էր յաջողական երեք պարտութիւն: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Մայքըլ Օլովորանտի նշանակեց 26 կէտ եւ 11 ռիպուստ, իսկ Էլթըն Պրէստը 20 կէտ եւ 12 ռիպուստ: Ռոքեթցի մարզիկներէն Սթիվ Ֆրէնսիս նշանակեց 23 կէտ:

Տենզըրի մէջ, Նակէթց 98-91 արդիւնքով պարտութեան մատնեց Սիթթըրզին: Տիքսոնիք Փիսթընզի մարզիկ Թիմ Հարտըրըյ, որ երկու մրցումով կախակալուած էր, անցեալ շաբաթավերջին Օրլանտօ Մէճիքէն իր կազմին կրած պարտութեան տք դէպի դաշտ հեռատեսիլ մը նետած ըլլալուն համար:

Մտորեա՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:
Փորթլէսթըն - Թրէյլ
Պլէյլըքս - Պոսթըն Սելթիքս 100-91
Շարլոթ Հոննէթց - Միլուոքի Պաքս 113-110
Տիքսոնիք Փիսթընզ - Տէնզըր Նակէթց 98-91
Լոս Անձելըս Բլիթթըր - Հիուսթըն Ռոքեթց 93-86
Ուաշինկթըն Ուիչարտը - Կոլտըն Սթըյթ Ուորիոր 99-96
Մտորեա՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:
Նիւ Ճըրքի Նէթց - Բլիթթըն Քաւաիթց
Ֆիլադելֆիա Սիթթըրզ - Մայնի Հիթ
Նիւ Եորք Նիքս - Մէմֆիս Կրիպիդ
Թորոնթօ Ռեփթըրզ - Միլուոքս Կոլտըն Սթըյթ Պաքս - Օրլանտօ Մէճիք
Արլանտօ Հոքս - Շիքաքօ Պուլզ
Լոս Անձելըս Լէյքըրզ - Տալաս Մալթրիքս
Տիքսոնիք Փիսթընզ - Եուրա Ճէյ
Կոլտըն Սթըյթ Ուորիոր - Սիթթըլ Մուլթրոնիքս
Հիուսթըն Ռոքեթց - Սաքրամենթօ Քինկզ

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ Հ. Մ. Ը. Մ. ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՎԵՑ ՄԱՐԶԻԿՈՎ

Վաղը՝ Հինգշաբթի, 21 Մարտին Էօ. Էն. Պէ.ի մէջ կը սկսի փինկ փոնկի գարնանային մրցաշարը, որ Կ'երկարի երեք օրերու վրայ: Մրցաշարին իրենց մասնակցութիւնը կը բերեն 25 խումբեր եւ շուրջ 75 մարզիկներ: Մրցումները պիտի ըլլան աղջիկներու եւ տղոց անհատական մրցաշար մը:

Մրցաշարին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հ. Մ. Ը. Մ. վեց մարզիկով: Աղջկանց մրցումներուն պիտի մասնակցին՝ Լիկա Պարիկեան, Լարա Քէչէպաշեան եւ Նոէլ Քէչիշեան, իսկ տղոց մրցումներուն՝ Ռապիկ Շեմեմեան, Ալֆրէտ Նաժըմ-Սարգիսեան եւ Մալուան Մըրչի:

ՊԱՍԲԵԹՊՈԼ. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՆ

ՍԱԺԷՍ - ԻԹԹԻՀԱՏ՝ 82 - 81

Պասքեթպոլի արաբական ակումբներու տղոց 16րդ ախոյեանութեան մրցումներուն, երէկ Սաժէս արձանագրեց կարեւոր յաղթանակ մը՝ 82 - 81 արդիւնքով պարտութեան մատնելով Եգիպտոսի Իթթիհատը:

Մրցումին աւարտէն քանի մը երկվայրկեան առաջ Սաժէս 81 - 79 արդիւնքով պարտուած էր, սակայն դաշտին տէրերը երեք կէտոց «արժէքաւոր» կողմ մը նշանակելով՝ տարին վերջնական յաղթանակը: Երրորդ յաղթանակը արձանագրելու պարագային Սաժէս կ'անցնի յաջորդ հանգրուան:

Յ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍՍ

ՊԱՍԲԵԹՊՈԼԻ ԵՒ ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ

ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍՍի յանձնախումբին կողմէ կազմակերպուած մինի ֆուտբոլի մրցումները, որոնց կուգահեռ սկսան նաեւ պասքեթպոլի մրցումները: Մտորեա՝ շաբաթավերջին արձանագրուած մրցումներուն արդիւնքները.

ՇԱՐԱԹ, 16 ՄԱՐՏ
ՊԱՍԲԵԹՊՈԼ
Թորոսեան - Գ. Չաթալպաշեան
(միջակ տղաք) 53 - 11
Կ. Բ. Վ. - Շամլեան (մեծ աղջիկներ) 23 - 21

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ
Մեարոպեան - Ս. Յակոբեան (փոքր) 4 - 1
Մեարոպեան - Եղիշէ Մանուկեան (մեծ) 5 - 2
Ս. Քառասնից Մանկանց - Ս. Ազնէս (փոքր) 7 - 1
Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ Աւետ. քոլէճ (մեծ) 9 - 2

ԿԻՐԱԿԻ, 17 ՄԱՐՏ
ՊԱՍԲԵԹՊՈԼ
Ս. Ազնէս - Յովակիմեան (միջակ աղջիկներ) 17 - 15

Ճեմարան - Եղիշէ Մանուկեան (մեծ աղջիկներ) 41 - 16
Ճեմարան - Եղիշէ Մանուկեան (մեծ տղաք) 48 - 41

ՄՍՈՐԵԻ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

ՇԱՐԱԹ, 23 ՄԱՐՏ
ՊԱՍԲԵԹՊՈԼ
Քառասուն Մանուկ - Գ. Չաթալպաշեան (միջակ տղաք) 1:30իս
Թորոսեան - Մեարոպեան (միջակ աղջիկներ) 2:15իս

Ս. Յակոբեան - Կ. Բ. Վ. (մեծ տղաք) 3:00իս
Կ. Բ. Վ. - Եղիշէ Մանուկեան (մեծ աղջիկներ) 4:00իս

Ս. Խաչ - Ս. Ազնէս (միջակ տղաք) 5:00իս
Թորոսեան - Գ. Չաթալպաշեան (միջակ աղջիկներ) 5:45իս

ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՐՏ
Ս. Հոփսիմեանց - Նուպարեան Խրիմեան (միջակ աղջիկներ) 2:30իս
Ս. Խանամիրեան - Նուպարեան Խրիմեան (միջակ տղաք) 3:15իս

Ս. Հոփսիմեանց - Գ. Կիլիպէսեան (մեծ աղջիկներ) 4:00իս
Հայ Աւետ. Այնճար - Նուպարեան Խրիմեան (մեծ տղաք) 5:00իս

Ճեմարան - Յովակիմեան (միջակ աղջիկներ) 5:45իս
Ճեմարան - Յովակիմեան (միջակ տղաք) 6:30իս

